Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ որակավորման ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ որակավորման ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ՝ հաշվի առնելով Գարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության պահանջները: Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին:

Որակավորման ապահովումը այն ներկայացնողին վերադարձվում է պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե պայմանագրի կատարումը փուլային է և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված չէ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ, ապա յուրաքանչյուր փուլի արդյունքը պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ փուլի գումարի նկատմամբ հաշվարկված համամասնությամբ:

Բանկային երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակցից ներկայացնում է հավելված 4-ի կամ հավելված 4.1-ի համաձայն:¹²

^{7.1} Եթե գ ն մ ա ն հ ա յ տ ո Վ տ Վ յ ա լ չ ա փ ա բ ա ժ ն ի գ ն մ ա ն գ ի ն ը .

-չ ի գ եր ա գ ա ն ց ու մ գ ն ու մ ն եր ի բ ա գ ա յ ի ն մ ի ա վ ո թ ի թ ս ա ն հ ի ն գ ա պ ա տ ի կ ը ,ապ ա ս ու լ յ ն պարբերող թյ ու ն ից հ ա ն վ ու մ է ն <<կ ա մ բ ա ն կ եր ի կ ո ղ մ ի ց տր ա մ ա դ ը վ ա ծ եր ա շ խ ի թ ն եր ի >>բ առ եր ը .

--չ ի գ եր ա գ ա ն ց ու մ գ ն ու մ ն եր ի բ ա գ ա յ ի ն մ ի ա վ ո թ ի ու թ ս ու ն ապատիկ ը ,բ ա յ ց ա վ ե լ ի է թ ս ա ն հ ի ն գ ա պ ա տ ի կ ի ց ,ապ ա ս ու լ յ ն պարբերող թյ ու ն ից հ ա ն վ ու մ է ն <<տ ու ժ ա ն թ ի թ ա վ ե լ վ ա ծ 4. 2)կ ա մ >>բ առ եր ը ,<<90>>թ Վ ո վ ,

-գ եր ա գ ա ն ց ու մ է գ ն ու մ ն եր ի բ ա գ ա յ ի ն մ ի ա վ ո թ ի ու թ ս ու ն ապատիկ ը ,ապ ա ս ու լ յ ն պարբերող թյ ու ն ից հ ա ն վ ու մ է <<տ ու ժ ա ն թ ի թ ա վ ե լ վ ա ծ 4. 2)կ ա մ >>բ առ եր ը ,<<15>>թ Վ ո վ փոխարին վ ու մ է <<30>>թ Վ ո վ ,ի ս կ <<20>>թ Վ ո վ` <<90>>թ Վ ո վ ,

¹² Եթե՝

Ընդ որում, եթե ապրանքների գնման պայմանագրերը կնքվում են Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա առկա ֆինանսական հատկացումների շրջանակում տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի (համաձայնագրերի) մասով ներկայացված որակավորման ապահովումը ենթակա է վերադարձման այդ համաձայնագիրը (համաձայնագրերը) կատարողի կողմից ողջ ծավալով պատշաճ կատարվելու և դրա արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու դեպքում:

Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

10.3. Պայմանագրի ապահովման չափը կազմում է գնման գնի 10 տոկոսը: Եթե պայմանագրի նախագծով նախատեսված ապրանքների գնման գինը պակաս է կնքվելիք պայմանագրի գնից, ապա պայմանագրի ապահովման չափը հաշվարկվում է պայմանագրի գնի նկատմամբ: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով:¹³

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «90008000664» գանձապետական հաշվին:

10.4 Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են 25 մլն. ՀՀ դրամը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի և որակավորման ապահովումները, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում են բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

10.5 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով (հավելված՝ 5.2):

10.6 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

10.7 Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի և որակավորման ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ լիազորված մարմնին, ներկայացնում է ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ

- տվյալ ընթացակարգի շրջանակում է չի կիրառվում 10.2 կետի 4-րդ պարբերության մեջ սահմանված կարգավորումները, ապա տվյալ պարբերության ընթացքում հանվում է հրավերից, իսկ 5-րդ պարբերության ընթացքում հանվում է "Կամ հավելված 4.1" բաժնից:

- տվյալ ընթացակարգի շրջանակում կիրառվում է 10.2 կետի 4-րդ պարբերության մեջ սահմանված կարգավորումները, ապա 4-րդ և 5-րդ պարբերության ընթացքում սահմանվում է հետևյալ պայմանը՝ "Պայմանագրի կատարման յուրաքանչյուր փուլի արդյունքն ընդունվելուց հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ փուլի գումարի նկատմամբ հաշվարկված համամասնության մեջ: Երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է 4.1 հավելվածի համաձայն: ", իսկ հավելված 4-ը հրավերից հանվում է:

¹³Եթե գնման հայտով գնվելիք ապրանքի գինը չի գերազանցում 25 մլն. ՀՀ դրամը, ապա "բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով" բաժնից փոխարինվում են "միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով" բաժնից, իսկ 3-րդ պարբերության մեջ նշված <<90>> թիվը փոխարինվում է <<20>> թվով:

ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը բանկ ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱՍԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա :¹⁴

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԵՏ ԿԱՊԿԱՍԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՍ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԻ ԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգրք) սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները:

12.2. Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3. Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կատարած գործողության կամ անգործության հետևանքով պատճառված վնասները հատուցվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

12.4. Սույն հրավերով սահմանված անգործության ժամկետը պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հայցային վաղեմության ժամկետ է, բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման և պայմանագիրը միակողմանի լուծելու հետ կապված վեճերի, որոնց դեպքում հայցային վաղեմության ժամկետը երեսուն օրացուցային օր է::

12.5. Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը քննվում և լուծվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

12.6. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

12.7. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

12.8. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն կետով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

¹⁴Ս ո լ յ ն կ ե տ ը ի մ ք ա գ ր վ ո լ մ է ը ս տ հ ամ ա պ ա տ ա ս ի ս ան պ ա տ վ ի ր ա տ ու ի :

12.9. Դատարանը սույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն բաժնով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում:

12.10. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն կետով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

12.11. Հայցադիմումի պատասխանը պատվիրատուն ներկայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

12.12. Գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր Օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

12.13. Դատարանը սույն բաժնով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

12.14. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

12.15. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

12.16. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

12.17. Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

12.18. Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

12.19. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն հրավերի 12.10 կետով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին աստիճանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

12.20. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն կետով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում:

12.21. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

12.22. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտը դրա հրապարակման օրն ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտն անհապաղ հրապարակում է տեղեկագրում:

12.23. Բողոքարկման համար գանձվող պետական տուրքերի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» օրենքով:

ՄԱՍ II
Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը:

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 1.1-ի.

2.3 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.4 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).¹⁵

2.6 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

3. ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

- 1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).
- 2) ընթացակարգի ծածկագիրը.
- 3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.
- 4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

¹⁵ Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

ԴԻՄՈՒՄՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
գնանշման հարցմանը մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ՊՈԱԿ ի կողմից « ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՏՏ-2 »
ծածկագրով հայտարարված

գնանշման հարցման _____ չափաբաժին (չափաբաժինների) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____ -ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____
հարկ վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ _____
գործունեության հասցեն
- հեռախոսահամարն է՝ _____
հեռախոսի համարը

Մույնով _____ -ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանումը

1) _____ -ն և իրեն փոխկապակցված անձինք
մասնակցի անվանումը

բավարարում են « ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՏՏ-2 » ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված
մասնակցության իրավունքի պահանջներին և _____ -ն պարտավորվում է ընտրված
մասնակցի անվանումը

մասնակցի ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման
ապահովում ¹⁰

2) « ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՏՏ-2 » ծածկագրով գնանշման հարցման մասնակցելու շրջանակում՝

• թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի
չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

• բացակայում է հրավերով սահմանված՝ _____ -ին
մասնակցի անվանումը

¹⁰ Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված
կարգավորումը, ապա « պարտավորվում ընտրված մասնակցի ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված
կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում » բառերը փոխարինվում են « կամ սույն
ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող
ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրոշմամբ ունի միջազգային
հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ
առնվազն 3-րդ աստիճանի 3-րդ աստիճանի վարկանիշի չափով »: Ընդ որում՝
նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

-ն « **ՀՊՏՀ-ԳՀԱՊԶԲ-24/ՏՏ-2** »*

մասնակցի անվանումը

Ծածկագրով զնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից
առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մոդելը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրություն

Կ. Տ.

**ըրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում*

ՁԵՎ

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

1. Կազմակերպությունը

1.1. Կազմակերպության տվյալները

1.1.1.	Անվանումը	
1.1.2.	Անվանումը լատինատառ	
1.1.3.	Պետական գրանցման համարը	
1.1.4.	Գրանցման օրը, ամիսը, տարին	
1.1.5.	Գրանցման հասցեն	
1.1.6.	Գրանցման պետությունը	
1.1.7.	Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը

1.2.1.	Հայտարարագիրը ներկայացնող անձի անունը և ազգանունը	
1.2.2.	Հայտարարագիրը ներկայացնող անձի պաշտոնը	

1.3. Հայտարարագրի ներկայացումը

1.3.1.	Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին	
1.3.2.	Հայտարարագրի էջերի քանակը	
1.3.3.	Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը	

2. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները

2.1. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները

2.1.1.	Ֆոնդային բորսայի անվանումը	
2.1.2.	Հղումը բորսայում առկա փաստաթղթերին	

2.2. Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները

2.2.1.	Անվանումը	
2.2.2.	Անվանումը լատինատառ	
2.2.3.	Պետական գրանցման համարը	
2.2.4.	Գրանցման օրը, ամիսը, տարին	
2.2.5.	Գրանցման հասցեն	
2.2.6.	Գրանցման պետությունը	
2.2.7.	Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

2.3. Վերահսկողության մակարդակը

2.3.1.	Մասնակցության չափը (%)	
2.3.2.	Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն

3. Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը

3.1. Պետության կամ համայնքի մասնակցությունը

3.1.1.	Պետության անվանումը	
3.1.2.	Համայնքի անվանումը	
3.1.3.	Մասնակցության չափը (%)	
3.1.4.	Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն

3.2. Միջազգային կազմակերպության մասնակցությունը

3.2.1.	Միջազգային կազմակերպության անվանումը	
3.2.2.	Միջազգային կազմակերպության անվանումը լատինատառ	
3.2.3.	Մասնակցության չափը (%)	
3.2.4.	Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն

4. Իրական շահառուի տվյալները

4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները

4.1.1.	Անունը	
4.1.2.	Ազգանունը	

4.1.3.	Անունը (լատինատառ)	
4.1.4.	Ազգանունը (լատինատառ)	
4.1.5.	Քաղաքացիությունը	
4.1.6.	Ծննդյան օրը, ամիսը, տարին	

4.2. Անձը հաստատող փաստաթուղթը

4.2.1.	Փաստաթղթի տեսակը	
4.2.2.	Փաստաթղթի համարը	
4.2.3.	Տրամադրման օրը, ամիսը, տարին	
4.2.4.	Տրամադրող մարմինը	
4.2.5.	ՀՕՀ կամ համարժեք համարը	

4.3. Անձի հաշվառման հասցեն

4.3.1.	Պետությունը	
4.3.2.	Համայնքը	
4.3.3.	Վարչատարածքային միավորը	
4.3.4.	Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը	

4.4. Անձի բնակության հասցեն

4.4.1.	Պետությունը	
4.4.2.	Համայնքը	
4.4.3.	Վարչատարածքային միավորը	
4.4.4.	Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը	

4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում

4.5.1.	Մասնակցության չափը (%)	
4.5.2.	Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ

4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)

ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում

4.6.1.	Մասնակցության չափը (%)	
4.6.2.	Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն

բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը

գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ

դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով

ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ

4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները

4.7.1.	Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին	
4.7.2.	Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը	<input type="checkbox"/> Առանձին <input type="checkbox"/> Փոխկապակցված անձանց հետ համատեղ

4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ	<input type="checkbox"/>	Այո
	<input type="checkbox"/>	Ոչ

4.8. Իրական շահառուի կոնտակտային տվյալները

4.8.1. Էլ. փոստի հասցեն	
4.8.2. Հեռախոսահամարը	

5. Միջանկյալ իրավաբանական անձինք

5.1. Կազմակերպության տվյալները

5.1.1. Անվանումը	
5.1.2. Անվանումը լատինատառ	
5.1.3. Պետական գրանցման համարը	
5.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին	
5.1.5. Գրանցման հասցեն	
5.1.6. Գրանցման պետությունը	
5.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

5.2. Իրական շահառուի տվյալները

5.2.1. Իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ	

5.3. Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները

5.3.1. Ֆոնդային բորսայի անվանումը	
5.3.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին	

6. Լրացուցիչ նշումներ

<i>Լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին</i>

I. Հայտարարագրի լրացման կարգը

1. Հայտարարագրի 1-ին բաժնում (Կազմակերպությունը) լրացվում են հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) տվյալները: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

- 1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են Կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և պետական գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.
- 2) «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը.
- 3) «Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում լրացվում են հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին, հայտարարագրի էջերի քանակը, ինչպես նաև դրվում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

2. Հայտարարագրի 2-րդ բաժինը (Բաժնետոմսերի ցուցակման տվյալները) լրացվում է, եթե Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ իրական շահառուների համարժեք բացահայտման չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկում ներառված շուկայում: Նշված չափանիշներին համապատասխանելու դեպքում այս բաժինը լրացվում է Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի համար: Այս բաժինը լրացնելու դեպքում հայտարարագրի հաջորդ բաժինները ենթակա չեն լրացման, բացառությամբ 5-րդ բաժնի, որը լրացվում է, եթե Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձը Կազմակերպության կանոնադրական կապիտալում ունի անուղղակի մասնակցություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

- 1) «Բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին՝ առկայության դեպքում այն փաստաթղթերին, որոնք պարունակում են տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի սեփականատերերի վերաբերյալ.
- 2) «Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացված տվյալները վերաբերում են ոչ թե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձին, այլ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի: Այս

ենթաբաժնում լրացվում են Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

3) «Վերահսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին վերաբերող տվյալները: Այս ենթաբաժնում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

3. Հայտարարագրի 3-րդ բաժինը (Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը) լրացվում է, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունի որևէ պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Բաժինը կարող է լրացվել մի քանի անգամ, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեն մի քանի պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Պետության մասնակցության դեպքում այս ենթաբաժնում լրացվում է պետության, իսկ համայնքի մասնակցության դեպքում՝ նաև համայնքի անվանումը: Այս ենթաբաժնում լրացվում են նաև իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

2) «Միջազգային կազմակերպության մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է միջազգային կազմակերպության ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Այս ենթաբաժնում լրացվում են միջազգային կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ), իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում միջազգային կազմակերպության մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

4. Հայտարարագրի 4-րդ բաժինը (Իրական շահառուի տվյալները) լրացվում է յուրաքանչյուր իրական շահառուի համար առանձին՝ Կազմակերպության իրական շահառուների քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի անձնական տվյալները: Տվյալները լրացվում են այնպես, ինչպես դրանք լրացված են իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթում: Եթե անձի անունը և ազգանունը հայերեն կամ լատինատառ առկա չեն վերջինիս անձը հաստատող փաստաթղթում, ապա հայտարարագրում լրացվում է դրանց տառադարձությունը:

2) «Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնում լրացվում են տեղեկությունների իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ.

3) «Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի հաշվառման վայրի հասցեն.

4) «Անձի բնակության հասցեն» ենթաբաժինը լրացվում է, եթե իրական շահառուի հաշվառման հասցեն տարբերվում է վերջինիս բնակության հասցեից: Այս ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի բնակության վայրի հասցեն.

5) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը չի հանդիսանում ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Այս ենթաբաժնում նշվում է, թե «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքով նախատեսված որ հիմք(եր)ով է անձը հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, և ներառվում են այդ հիմքերի առնչությամբ պահանջվող տեղեկությունները: Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. այս ենթաբաժնի «ա» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Մասնակցությունը կարող է լինել Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (ուղղակի մասնակցություն) կամ Կազմակերպության բաժնեմասին (բաժնետոմսին, փային) տիրապետող այլ իրավաբանական անձի բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (անուղղակի մասնակցություն): Անուղղակի մասնակցությունը կարող է իրականացվել անկախ ֆիզիկական անձի և

Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայր) տիրապետող իրավաբանական անձի շղթայում առկա միջանկյալ իրավաբանական անձանց քանակից: «Մասնակցության չափը» դաշտում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ: Մասնակցության չափը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով իրական շահառուի ուղղակի և անուղղակի մասնակցության արդյունքում Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության բոլոր տոկոսների հանրագումարը: Անուղղակի մասնակցության դեպքում, կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր նախորդ միջանկյալ կազմակերպության մասնակցության չափը, այն է՝ Կազմակերպության մասնակցից իրավաբանական անձի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը բազմապատկելով Կազմակերպության մասնակցից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը: «Մասնակցության տեսակը» դաշտում կատարվում է նշում կանոնադրական կապիտալում մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին: Կանոնադրական կապիտալում և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության դեպքում նշում է կատարվում միաժամանակ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության վերաբերյալ:

բ. այս ենթաբաժնի «բ» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով:

գ. այս ենթաբաժնի «գ» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

6) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Իրական շահառուների բացահայտումն իրականացվում է Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված չափանիշներով: Այս ենթաբաժնում նշումները կատարվում են սույն կարգի 4.5-րդ կետում սահմանված կանոնների հաշվառմամբ: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով:

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ____ օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁷ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր

¹⁷ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:
^{17.1} Գանձապետարանում հաշիվները չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը չի կիրառվում և հետևյալ պարբերության փոխարեն՝ «Ընդ որում գնման դիմաց վճարող մասնորոնական անհատական կազմակերպության կողմից պայմանագրի վճարման»

վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև _____ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:¹⁸

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի ---ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում^{17.1}:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված _____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:¹⁹

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _____ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի

Ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

¹⁸Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից: ¹⁹Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից ²⁰ Եթե պայմանագրի կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորումը ընդունման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

¹⁹Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից ²⁰ Եթե պայմանագրի կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորումը ընդունման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²⁰ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

²⁰ Եթե պայմանագրի կնքվել է «Գնու մանրի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունը և ներքին չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագրի կնքումը ներառում է մեկից ավելի չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:²¹

²¹ Պետական բյուջեի միջոցներին հաշվին պարտավորությունը կազմում է ընդհանուր գնի չափով:²² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագրից չի

իրականացվում գործակալության պայմանագրի կնքվելու միջոցով:²³ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագրից չի իրականացվում համատեղ

գործունեություն (կոնսորցիումի) պայմանագրի կնքվելու միջոցով:²⁴ Եթե

պայմանագրի կնքվում է «Գնու մանրի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պայմանագրի գնի չափով տուգանքը կազմում է «Վերջինից հանելով 4-րդ

նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը կազմում է «Վերջինից հանելով 4-րդ

դեպքում մեկնոր ապահովումները» բառերը փոխարինելով «Աբառով: Սույն կետը

հանվում է պայմանագրից, եթե պայմանագրից չի կնքվում «Գնու մանրի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²¹

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձևի փոփոխության, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

²¹ Պետական բյուջեի միջոցներով հաշվարկվող պարտավորություններն են ներկայացված 2017 թվականի մարտի 31-ի դրությամբ հաշվարկված պարտավորությունները: ²² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալի կողմից: ²³ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի կնքելու միջոցով: ²⁴ Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» 33-րդ հոդվածի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի բնական գնից, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասության 5-րդ նախադասության 5-րդ կետը: «Իսկ տոկոսների ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումների» բառերը փոխարինելով՝ «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում «Գնումների մասին» 33-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:²²

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:²³

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

²² Ս ո լ յ ն կ ե տ ը հ ա ն վ ո լ մ է պ ա յ մ ա ն ա գ ռ ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ ռ ը չ ի ի ռ ա կ ա ն ա ց վ ո լ մ գ ո Ր ծ ա կ ա լ ո լ թ յ ա ն պ ա յ մ ա ն ա գ ռ ի կ ն ք ե լ ո լ մ ի ջ ո ճ ո ճ ո Վ :²³ Ս ո լ յ ն կ ե տ ը հ ա ն վ ո լ մ է պ ա յ մ ա ն ա գ ռ ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ ռ ը չ ի ի ռ ա կ ա ն ա ց վ ո լ մ հ ա մ ա տ ե ղ գ ո Ր ծ ո լ ն ե ո լ թ յ ա ն (կ ո ն ս ո Ր ց ի ո լ մ ի) պ ա յ մ ա ն ա գ ռ ի կ ն ք ե լ ո լ մ ի ջ ո ճ ո ճ ո Վ :²⁴ Ե թ ե պ ա յ մ ա ն ա գ ռ ը կ ն ք վ ո լ մ է "Գ ն ո լ մ ն ե Ր ի մ ա ս ի ն " 3 3 օ Ր ե ն ք ի 15-ր դ հ ո ղ վ ա ծ ի 6-ր դ մ ա ս ի հ ի մ ա ն վ Ր ա լ պ ա յ մ ա ն ա գ ռ ի գ ի ն ը չ ի գ ե Ր ա գ ա ն ց ո լ մ գ ն ո լ մ ն ե Ր ի ք ա գ ա յ ի ն մ ի ա վ ո Ր ի ք ս ա ն հ ի ն գ ա պ ա տ ի կ ը , ա պ ա ս ո լ յ ն կ ե տ ը խ մ ք ա գ Ր վ ո լ մ է `վ ե Ր ջ ի ն ի ց հ ա ն ե լ ո Վ 4-ր դ ն ա խ ա դ ա ս ո լ թ յ ո լ ն ը , ի ս կ 5-ր դ ն ա խ ա դ ա ս ո լ թ յ ո լ ն ը խ մ ք ա գ Ր վ ո լ մ է `« ի ս կ տ ո լ ժ ա ն ք ի ձ ն ո վ ն ե Ր կ ա յ ա ց վ ա ծ ո Ր ա կ ա վ ո Ր մ ա ն և պ ա յ մ ա ն ա գ ռ ի ա պ ա հ ո Վ ո լ մ ն ե Ր ի փ ո խ ա Ր ի ն մ ա ն դ ե պ ը ո լ մ ն ա լ ն ո Ր ա պ ա հ ո Վ ո լ մ ն ե Ր » ք ա ռ ե Ր ը փ ո խ ա Ր ի ն ե լ ո Վ « և » ք ա ռ ո Վ : Ս ո լ յ ն կ ե տ ը հ ա ն վ ո լ մ է պ ա յ մ ա ն ա գ ռ ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ ռ ը չ ի կ ն ք վ ո լ մ "Գ ն ո լ մ ն ե Ր ի մ ա ս ի ն " 3 3 օ Ր ե ն ք ի 15-ր դ հ ո ղ վ ա ծ ի 6-ր դ մ ա ս ի հ ի մ ա ն վ Ր ա :

²³ Ս ո լ յ ն կ ե տ ը հ ա ն վ ո լ մ է պ ա յ մ ա ն ա գ ռ ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ ռ ը չ ի ի ռ ա կ ա ն ա ց վ ո լ մ հ ա մ ա տ ե ղ գ ո Ր ծ ո լ ն ե ո լ թ յ ա ն (կ ո ն ս ո Ր ց ի ո լ մ ի) պ ա յ մ ա ն ա գ ռ ի կ ն ք ե լ ո լ մ ի ջ ո ճ ո ճ ո Վ :²⁴ Ե թ ե պ ա յ մ ա ն ա գ ռ ը կ ն ք վ ո լ մ է "Գ ն ո լ մ ն ե Ր ի մ ա ս ի ն " 3 3 օ Ր ե ն ք ի 15-ր դ հ ո ղ վ ա ծ ի 6-ր դ մ ա ս ի հ ի մ ա ն վ Ր ա լ պ ա յ մ ա ն ա գ ռ ի գ ի ն ը չ ի գ ե Ր ա գ ա ն ց ո լ մ գ ն ո լ մ ն ե Ր ի ք ա գ ա յ ի ն մ ի ա վ ո Ր ի ք ս ա ն հ ի ն գ ա պ ա տ ի կ ը , ա պ ա ս ո լ յ ն կ ե տ ը խ մ ք ա գ Ր վ ո լ մ է `վ ե Ր ջ ի ն ի ց հ ա ն ե լ ո Վ 4-ր դ ն ա խ ա դ ա ս ո լ թ յ ո լ ն ը , ի ս կ 5-ր դ ն ա խ ա դ ա ս ո լ թ յ ո լ ն ը խ մ ք ա գ Ր վ ո լ մ է `« ի ս կ տ ո լ ժ ա ն ք ի ձ ն ո վ ն ե Ր կ ա յ ա ց վ ա ծ ո Ր ա կ ա վ ո Ր մ ա ն և պ ա յ մ ա ն ա գ ռ ի ա պ ա հ ո Վ ո լ մ ն ե Ր ի փ ո խ ա Ր ի ն մ ա ն դ ե պ ը ո լ մ ն ա լ ն ո Ր ա պ ա հ ո Վ ո լ մ ն ե Ր » ք ա ռ ե Ր ը փ ո խ ա Ր ի ն ե լ ո Վ « և » ք ա ռ ո Վ : Ս ո լ յ ն կ ե տ ը հ ա ն վ ո լ մ է պ ա յ մ ա ն ա գ ռ ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ ռ ը չ ի կ ն ք վ ո լ մ "Գ ն ո լ մ ն ե Ր ի մ ա ս ի ն " 3 3 օ Ր ե ն ք ի 15-ր դ հ ո ղ վ ա ծ ի 6-ր դ մ ա ս ի հ ի մ ա ն վ Ր ա :

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:²⁴

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

²⁴ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումնների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ «վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում մնան նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումնների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Քանակ	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ
1	35121320/1	Տեսախցիկ 4MP	Տեսախցիկ 4MP DS-2CD1043G2-I(C) 2.8mm կամ համարժեք, DS-2CD1043G0-I կամ համարժեք DS-2CD1043G0E-I Երաշխիք 1 տարի:	120	հատ	22000	2640000
2	32333300/1	Տեսաձայնագրիչ 64 ալիք	Տեսաձայնագրիչ 64 ալիք DS-7764NI-M4 կամ համարժեք, DS-7764NI-I4 կամ համարժեք DS-88664NI-I8: Երաշխիք 1 տարի:	4	հատ	310000	1240000
3	39151230/1	Սերվերային պահարան rack	Սերվերային պահարան rack Տեսակը՝ պատի / ֆորմ ֆակտոր՝ 6U / դաս՝ mounting cabinet / առավելագույն քաշը՝ 60 կգ / պաշտպանություն՝ IP20 / առանձնահատկություններ՝ առաջին դուռ՝ ապակի / գույնը՝ սև	3	հատ	60000	180000
4	30232231/1	Կոշտ սկավառակ 4TB	Կոշտ սկավառակի հիշողություն՝ առնվազն 4 TB / ինտերֆեյս՝ SATA , 5400-5900 պ / ր, 64-256 ՄԲ բուֆեր , SATA 6 գր/վ, նախատեսված տեսահսկման համար, 24/7 աշխատանքային ռեժիմով: Երաշխիք 6 ամիս:	4	հատ	36000	144000
5	30237113/2	Կոնեկտոր RJ45	Կոնեկտոր RJ45	400	հատ	60	24000
6	31221230/1	Մալուխ UTP CAT5 Solid Copper	Տեսակը - UTP LAN մալուխ Հիմնական հաղորդալարի նյութ-Պղինձ Դաս - CAT5 Մեկ տուփի երկարությունը նվազագույնը - 305մ, տուփը պետք է կշռի նվազագույնը 9.5 կգ	3050	հատ	180	549000
7	30237120/1	POE սվիչ 8 port 10/100 2 uplink	POE սվիչ 8 port 10/100 2 uplink	10	հատ	25000	250000

			DS-3E0310P-E/M կամ համարժեք, DS-3E0310HP-E: Երաշխիք 1 տարի:				
8	30237120/2	POE սվիչ 16 port 10/100 2 uplink	POE սվիչ 16 port 10/100 2 uplink DS-3E0518P-E կամ համարժեք DS-3E0518P-E/M	4	հատ	90000	360000
9	30237120/3	Սվիչ 8 port 10/100/1000	Սվիչ 8 port 10/100/1000 DS-3E0508D-E կամ համարժեք DS-3E0508-E(B)	8	հատ	11000	88000
10	31221241/1	Պտուտակ դյուբեղով հարվածային	Պտուտակ դյուբեղով հարվածային 6մմ*40մմ:	30	հատ	500	15000
11	44531220/1	Տափօղակ	Տափօղակ լայն մեջի անցքը 3-4մմ, դուրսը 12-15մմ:	5	հատ	2000	10000
12	44531160/5	Պտուտակ գիպսակարտոնի	Պտուտակ գիպսակարտոնի՝ գույնը սև 3.5մմx25մմ:	5	հատ	2000	10000
13	44511100/22	Կոնեկտորի խփիչ RJ45	Բարձրորակ պողպատ, հակաքորոզ ծածկով, RJ-45 կոնեկտոր խփեղու գործիք, Եզրերի մաքրում և պտտում՝ խփման ուժի կարգավորմամբ Եվրոպական արտադրության	2	հատ	15000	30000
14	44511100/23	Ցանցային վարդակի խփիչ RJ45	Ցանցային վարդակի խփիչ RJ45 Gembird T-431 կամ համարժեք Ideal 35-485 Punch Down Tool	2	հատ	10000	20000
Պայմանագրի ժամկետը Срок действия договора		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2024					
Մատակարարման հասցեն		ք. Երևան, Նալբանդյան 128:					
Մատակարարման ժամկետը		Մատակարարումը պետք է իրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում:					
Վճարման ժամկետը		Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:					
Այլ պայմաններ		Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և գործարանային փաթեթավորմամբ: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը պատվիրատուի պահեստում իրականացնում է մատակարարը իր միջոցների հաշվին: Յուրաքանչյուր չափաբաժնի մատակարարվող ապրանքի ամբողջ խմբաքանակը պետք է լինի մեկ տեսակի և պատկանի նույն ապրանքանիշին:					

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	35121320/1	Տեսախցիկ 4MP										100%	100%	100%	100%
2	32333300/1	Տեսաձայնագրիչ 64 ալիք										100%	100%	100%	100%
3	39151230/1	Սերվերային պահարան rack										100%	100%	100%	100%
4	30232231/1	Կոշտ սկավառակ 4TB										100%	100%	100%	100%
5	30237113/2	Կոնեկտոր RJ45										100%	100%	100%	100%
6	31221230/1	Մալուխ UTP CAT5 Solid Copper										100%	100%	100%	100%

7	30237120/1	POE սվիչ 8 port 10/100 2 uplink										100%	100%	100%	100%
8	30237120/2	POE սվիչ 16 port 10/100 2 uplink										100%	100%	100%	100%
9	30237120/3	Սվիչ 8 port 10/100/1000										100%	100%	100%	100%
10	31221241/1	Պտուտակ դյուբելով հարվածային										100%	100%	100%	100%
11	44531220/1	Տափօղակ										100%	100%	100%	100%
12	44531160/5	Պտուտակ գիպսակարտոնի										100%	100%	100%	100%
13	44511100/22	Կոնեկտորի խփիչ RJ45										100%	100%	100%	100%
14	44511100/23	Ցանցային վարդակի խփիչ RJ45										100%	100%	100%	100%

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (վաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

Ստորագրություն

ազգանուն, անուն

ստորագրություն